

Բնագիտամաթեմատիկական առարկաների և ֆիզիկուլտուրայի մասնախմբի 2022-2023 ուստարվա կատարած աշխատանքների հաշվետվություն

Բնագիտամաթեմատիկական առարկաների և ֆիզիկուլտուրայի մասնախումբը բաղկացած է տարբեր առարկաներից՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն, մաթեմատիկա, հանրահաշիվ, երկրաչափություն, ինֆորմատիկա, շախմատ և ֆիզիկուլտուրա: Մասնախումբը իր աշխատանքներում ընդգրկել է այնպիսի գործեր, որոնք առնչվում են բոլոր առարկաներին: Ստորև ներկայացվում է այս ուստարվա կատարված աշխատանքները:

1. Մասնախմբի նիստերը

Օգոստոս ամսին յուրաքանչյուր ուսուցիչ ծանոթացել է 2022-2023 ուստարվա մեթոդական ցուցումներին: Կատարվել է 10 նիստ: Բոլոր նիստերը արձանագրված են: Յուրաքանչյուր նիստում քննարկվել է դասընթացի ժամանակ առաջացած հրատապ հարցերը: Հատկապես քննարկվում և ծանոթացվում են ծրագրային և չափորոշչային փոփոխությունները, թեմատիկ գրավոր աշխատանքների և գոծնական աշխատանքների արդյունավետ անցկացման հարցերը, որը արտացոլված է տարեսկզբին կազմված թեմատիկ պլաններ: Ուստարվա ընթացքում համապատասխան քանակով տրվել են թեմատիկ և գոծնական աշխատանքներ: Անցկացվում են զեկուցումներ նրվիրված ուսումնադաստիարակչական աշխատանքներին և նոր մեթոդների կիրառմանը: Այդ զեկուցումները իրենց բովանդակությամբ աջակցում են դասավանդման գործընթացի արդյունավետությանը: Քննարկվում են նաև փոխադարձ դասալսումները և անցկացված միջոցառումները: Ուսուցիչները դասին ներկայանում են ամենօրյա դասի պլանով, որը վերահսկվում է տնօրենության կողմից: Դասի պլանում ուսուցիչները նշում են նաև այն աշխատանքը, որոնք պետք է կատարեն ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ: Ուշադրություն են դարձրել Emis.am կայքի ցուցումներին և կանոնավոր կերպով լրացվել են էլեկտրոնային մատյանի գրանցումները, որպեսզի չլինեն վրիպումներ և բացթողումներ:

2. Միջոցառումներ և բաց դասեր

Ա. Բաց դասեր.

1. Բաց դաս մաթեմատիկա-երկրաչափություն առարկայից << Բազմանկյուններ >> թեմայով, ղեկավար՝ Ն. Գազինյան, դասարան 8-րդ << ա >> դասարանում

2. Բաց դաս քիմիա առարկայից << Քիմիական ռեակցիաներ >> թեմայով, ղեկավար՝ Ե. Սամարյան, դասարան 9-րդ << ա >> դասարանում

3. Բաց դաս կենսաբանությունից << ՄԻԱՎ-ից և ՁԻԱՀ-ից պաշտպանության միջազգային օրը >> թեմայով, ղեկավար՝ Ս Նազարյանը 9-րդ դասարանում

4. Բաց դաս ֆիզիկակայից << Մթնոլորտային ճնշում >> թեմայով, ղեկավար՝ Կ. Սիմոնյան 7-րդ դասարանում

